ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ թիվ ՍՑ-LO-2020/35 ԸՆԹԱՑԱԿԱՐԳՆ ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց միջև վերաբաշխելու և վերջիններիս պաշտոնավարման դադարման հետ կապված գործընթացը կանոնակարգելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի՝ սույն թվականի մայիսի 31-ի թիվ 238-Ա հրամանի 2-րդ կետը, համաձայն որի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն ընթացակարգերը, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով սկսվել են, սակայն դրանց շրջանակներում գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց կողմից որոշումներ չեն կայացվել ՀՀ դատարանների կողմից դատական գործերի շրջանակներում կիրառված հայցի ապահովման միջոցների հետևանքով, համապատասխան գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թողնվում են առանց քննության սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ.-ի թիվ 26/26-1/20394-2019 գրությամբ «Արտ Պլաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-LO-2020/35 ընթացակարգը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**